



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ

Ուսումնասիրություն

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք
սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ
կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի
առանձին դրույթների վերաբերյալ



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը¹ (այսուհետ տեքստում՝ Նախագիծ), որն առաջին ընթերցմամբ ընդունվել է ՀՀ ազգային ժողովի կողմից: Սույն աշխատանքն ուղղված է Նախագծով առաջարկվող որոշ կարգավորումների ուսումնասիրությանն ու դրանց բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացմանը:

Հանձնաժողովների կազմում հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը

Ներկայացված Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել Օրենսգրքի 77-րդ հոդվածում՝ նախատեսելով ստեղծել էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և ուսումնական հարցերի հանձնաժողով: Բոլոր հանձնաժողովներում նախատեսվում է ընդգրկել երկուական հեղինակավոր իրավաբաններ:

Այսպես, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում, ինչպես նաև ուսումնական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամներին առաջադրում են համապատասխան հասարակական կազմակերպությունները: Որպես հանձնաժողովների անդամ կարող է առաջադրվել այն հեղինակավոր իրավաբանը, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան կամ մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն, որն է կուսակցության անդամ չէ և չունի դատվածություն դիտավորությամբ կատարված արարքի համար:

Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի ոչ դատավոր անդամին ներկայացվող պահանջներն են՝ հեղինակավոր իրավաբան, որն օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն:

Գտնում ենք, որ դատավորների գործունեությանն առնչվող հանձնաժողովներում ներգրավված իրավաբան մասնագետներին ներկայացվող պահանջները պետք է լինեն առավել խիստ: Նախ, մասնագիտական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձառություն ունենալու պահանջը բավականին ցածր շեմ է՝ հանձնաժողովներում իսկապես պրոֆեսիոնալ և հեղինակավոր իրավաբանների ներգրավելու տեսանկյունից: Ավելին, անձի բարձր մասնագիտական որակների պահանջը որոշակի չէ, և հստակ չեն դրա գնահատման չափանիշները: Խնդրահարույց է նաև այն, որ դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ոչ դատավոր անդամի դեպքում ներկայացված չէ **քաղաքական կուսակցության անդամ չլինելու պահանջը**:

Նախագծի նույն հոդվածով սահմանվում է, որ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի, ինչպես նաև ուսումնական հարցերի հանձնաժողովի ոչ դատավոր անդամների թեկնածուներին կարող են առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, *որոնց*

¹ http://parliament.am/committee_docs/7/Legal/K-428-K-428-12_DR2_nakhagits.pdf



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կանոնադրական նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ դատական իշխանության հանրային հաշվետվողականության բարձրացմանն ուղղված գործունեությունը և որոնք վերջին հինգ տարիներին իրականացնում են նման գործունեությունը:

Չնայած ողջունելի է հասարակական կազմակերպությունների ներգրավվածության նախատեսումը, դրանց ներկայացվող պահանջները նույնպես խնդրահարույց են: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող հասարակական կազմակերպությունների գերակշիռ մասը որպես կանոնադրական նպատակ հետապնդում է մարդու իրավունքների պաշտպանությունը, սակայն դատական իշխանությանն առնչվող որևէ գործունեություն չի իրականացնում:

Հետևաբար, հաշվի առնելով ոլորտի ու հանձնաժողովների իրավասությանը վերապահված հարցերի կարևորությունը, անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների համար ևս սահմանել լրացուցիչ իրատեսական պահանջ չափանիշներ, ինչը թույլ կտա ներգրավել առավել պրոֆեսիոնալ հասարակական կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների:

Առաջարկ.

- Սահմանել հանձնաժողովների ոչ դատավոր անդամների և նրանց թեկնածությունն առաջարկող հասարակական կազմակերպությունների համար լրացուցիչ բարձր պահանջներ:

Դատավորների թեկնածուների որակավորման ստուգում

Կազմակերպությունը 2018-2019թթ. ընթացքում իրականացրել է դատավորների թեկնածուների հավակնորդների որակավորման ստուգման՝ գրավոր քննության և հարցազրույցի փուլերի, ինչպես նաև հավակնորդների կողմից արդյունքների դատական կարգով բողոքարկման քննության մշտադիտարկում, որոնց արդյունքները ամփոփվել են համապատասխան զեկույցներում²: Դրանցով արձանագրվել են ինչպես բովանդակային, այնպես էլ ընթացակարգային մի շարք խնդիրներ, որոնց, այդուամենայնիվ, Նախագծով լուծում չի տրվել:

Մասնավորապես, վեր են հանվել մտահոգություններ՝ կապված գնահատման հանձնաժողովների անդամների ընտրության, վերջիններիս ներկայացվող պահանջների հետ: Չնայած Նախագծի 24-րդ հոդվածով նախատեսվում է գնահատման հանձնաժողովի անդամ դատավորների համար նախատեսել գնահատված լինելու դեպքում գնահատման վերջին արդյունքներով բարձր կամ լավ գնահատական ստացած լինելու պահանջը, գտնում ենք, որ դա բավարար չէ և չի արտացոլում պրակտիկայում առկա խնդիրների լուծումները:

Ըստ այդմ, պետք է օրենքով առավել հստակեցվեն հանձնաժողովի անդամներին ներկայացվող մասնագիտական կարողությունների ու հմտությունների պահանջները, դրանք լինեն հնարավորինս կոնկրետ, կանխատեսելի, որի հիման վրա հնարավոր կլինի հանձնաժողովների կազմերը ձևավորել իրապես կոմպետենտ անդամներով:

Նախագծի 25-րդ հոդվածով նախատեսվում է, որ գնահատման հանձնաժողովի անդամները պետք է ապահովված լինեն գնահատման չափորոշիչներին համապատասխան միավորների սանդղակով և ուղենիշային տիպային պատասխաններով: [...] Հանձնաժողովի անդամները գնահատական

² <http://prwb.am/new/wp-content/uploads/2019/06/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

նշանակելիս հաշվի են առնում սույն օրենսգրքի 103-րդ հոդվածով սահմանված հատկանիշները, որոնց պետք է համապատասխանեն Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գնահատման չափանիշները:

Առաջարկվող կարգավորումը չի սահմանում գնահատման հանձնաժողովի անդամների պարտականությունը հիմնավորել և պատճառաբանել հավակնորդի պատասխանին նշանակված կոնկրետ գնահատականը, ինչը պրակտիկայում հանգեցնում է աշխատանքի կամայական գնահատման:

Ավելին, Բարձրագույն դատական խորհրդի կողմից սահմանված գնահատման չափորոշիչները և չափանիշները հստակ չեն, չեն պարունակում բացատրություն և հստակ ցուցիչներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի կանխատեսել կոնկրետ իրավիճակում պատասխանի գնահատականը: Արդյունքում, անհստակ է կոնկրետ գրավոր աշխատանքի գնահատման սկզբունքն ու միավորների նվազեցման պատճառները: Սա հանգեցնում է նաև աշխատանքի բովանդակային բողոքարկման անարդյունավետության:

Նախագծով առաջարկվում է ներդնել հավակնորդների գրավոր քննության բողոքարկման կարգ՝ բողոքարկման հանձնաժողովի կողմից: Չնայած բողոքարկման հնարավորության ներդրումը կարող է դրական գնահատվել, այդուամենայնիվ, նախատեսված առաջարկվող կարգավորումը, որի համաձայն՝ բողոքարկման հանձնաժողովը կարող է քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել կամ բավարարել՝ մասնակի կամ ամբողջությամբ, խնդրահարույց է, քանի որ այն ևս չի ամրագրում պատճառաբանված որոշում կայացնելու՝ բողոքարկման հանձնաժողովի պարտականությունը: Նման պայմաններում, հավակնորդը գրկված է լինում իր քննության և գնահատականի վերաբերյալ պատճառաբանված որոշում ստանալու հնարավորությունից:

Նախագծով առաջարկվում է գրավոր քննության դատական բողոքարկումը սահմանափակել բացառապես *ընթացակարգային հարցերով*, եթե դրանք բողոքարկվել են բողոքարկման հանձնաժողովին: Նման կարգավորումը էականորեն սահմանափակում է հավակնորդի իրավունքի պաշտպանության հնարավորությունը, հատկապես գնահատման և բողոքարկման հանձնաժողովներին գնահատման և բողոքի առնչությամբ պատճառաբանություն ներկայացնելու պարտականություն չսահմանելու պայմաններում:

Նախագծով առաջարկվում է սահմանել Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորի թեկնածուի հավակնորդների **բաց քվեարկության կարգ**: Չնայած Նախագծով փորձ է արվում սահմանել Բարձրագույն դատական խորհրդի կողմից հավակնորդին գնահատելիս հաշվի առնվող հանգամանքները (որակավորման գրավոր քննության և հարցազրույցի արդյունքները, հոգեբանական թեսթի արդյունքները և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տրամադրած՝ հավակնորդի բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը), այդուամենայնիվ, Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորների թեկնածուների հավակնորդների գնահատումը թողնված է յուրաքանչյուր անդամի ներքին համոզմանը, ինչը ենթադրում է քվեարկության պատճառաբանվածության բացառում: Արդյունքում, գնահատումն անկանխատեսելի է, հավակնորդի համար անհստակ են քվեարկության պատճառները:

Առաջարկներ.



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Սահմանել հանձնաժողովի անդամներին ներկայացվող խիստ, միևնույն ժամանակ իրատեսական պահանջներ՝ հետևողական լինելով անդամի մասնագիտական ունակությունների ու ոլորտային կարողությունների տիրապետմանը
- Օրենսգրքով սահմանել գնահատման հանձնաժողովի անդամների կողմից հավակնորդների գրավոր աշխատանքի վերաբերյալ բովանդակային մեկնաբանություններ և գնահատականի պատճառաբանություն ներկայացնելու պահանջ:
- Օրենսգրքով ամրագրել բողոքարկման հանձնաժողովի կողմից հավակնորդի բողոքի վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելու պարտականությունը:
- Վերացնել գրավոր քննության դատական բողոքարկման սահմանափակումները:
- Օրենսգրքով սահմանել Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից դատավորի թեկնածուների հավակնորդների քվեարկության պատճառաբանություն ներկայացնելու պահանջ:

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը

Կարգապահական պատասխանատվության հիմքերը

Նախագծով սահմանվում է Օրենսգրքի 142-րդ հոդվածում փոփոխել դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Անհրաժեշտ է փաստել, որ առաջարկվող հիմքերը չեն բավարարում հստակության և իրավական որոշակիության պահանջները: Ինչպես ամրագրել է Վենետիկի հանձնաժողովը, դատավորի կարգապահական պատասխանատվության իրավահարաբերությունները պետք է ձևակերպված լինեն հստակ: Հստակ սահմանված կանոնների բացակայությունը վտանգավոր է, քանի որ կարգապահական իրավախախտումների դեպքում հնարավոր է սկսվի կամայական հետապնդում դատավորների նկատմամբ:

Մասնավորապես, առաջարկվում է գործող օրենսգրքով սահմանված նյութական և դատավարական իրավունքի ակնհայտ և կոպիտ խախտումը փոխարինել նյութական և դատավարական իրավունքի՝ դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարված խախտմամբ: Այս առնչությամբ անհրաժեշտ է փաստել, որ Վենետիկի հանձնաժողովը ՀՀ դատական օրենսգրքի փոփոխությունների վերաբերյալ 14.10.2019թ. CDL-AD(2019)024 կարծիքով փաստել է, որ <ավելի լավ կլինի արձանագրել, որ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտումը պետք է ոչ միայն ողջամտորեն ենթադրվի, այլ լինի ակնհայտ: Հիրավի, սովորական խախտման և կոպիտ անփութության միջև տարբերությունը էական է, սակայն օրենքը պետք է ձևակերպված լինի այնպես, որ միայն ցանկացած իրավաբանի համար ակնհայտ սխալները լինեն կարգապահական պատասխանատվության ենթակա: Հետևաբար, անընդունելի է խախտման ակնհայտությունը՝ կարգապահական պատասխանատվության հիմք վերացնելը: Նման կարգավորումը պրակտիկայում կարող է հանգեցնել դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության կամայական կիրառման³:

Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասի լրացումն առավել խնդրահարույց է, որի համաձայն՝ *արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության*

³ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)024-e)



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությանը չի կարող հեղինակագրվել դատական իշխանությունը:

Այս կարգավորումը անհստակ և անորոշ է: Նախ, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար լրացուցիչ չափանիշ է սահմանում՝ *դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և դատական իշխանության հեղինակագրվումը*, որոնք, սակայն, Նախագծով սահմանվում են որպես էական կարգապահական խախտման չափանիշներ նույն հոդվածի 6-րդ մասի փոփոխության համաձայն:

Ավելին, նույն դրույթով սահմանված *«նվազ կարևորությունը»* որոշակի ձևակերպում չէ, և Բարձրագույն դատական խորհրդին օժտում է հայեցողության լայն շրջանակով՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպք մեկնաբանել սուբյեկտիվորեն, ինչը հղի է պրակտիկայում կարգապահական պատասխանատվության կամայական կիրառման լուրջ վտանգով: Միաժամանակ, խնդրահարույց է նաև հակառակ իրավիճակը, երբ այս կամ այն խախտումը կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի կողմից կարող է գնահատվել որպես նվազ կարևորություն ունեցող՝ բացառելով դատավորի կարգապահական պատասխանատվությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է փոփոխել դատավորի կողմից թույլ տրված էական կարգապահական խախտման պահանջները, ըստ որոնց էական կարգապահական խախտում է՝

1. նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դատավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և/կամ ազատությունների հիմնարար խախտման կամ հեղինակագրվում է դատական իշխանությունը:

2. դատավորի վարքագծի կանոնների խախտումը, որը դնարովել է համապատասխան հոդվածներով և կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ, և պայմանավորված կատարման հանգամանքներով և/կամ առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ,

3. երկու նկատողություն և մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:

«Նվազ կարևորության խախտման» և «էական խախտման» առնչությամբ անհրաժեշտ է հիշատակել Վենետիկի հանձնաժողովի կարծիքը ՀՀ դատական օրենսգրքի նախագծերից մեկի վերաբերյալ, ըստ որի՝ Օրենսգրքի 155-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է «էական կարգապահական խախտումը»: Այս շեմին կարելի է հասնել, (1) եթե դատավորը կատարում է որոշակի քանակությամբ ավելի նվազ բնույթի խախտումներ, կամ (2) եթե դատավորը կատարում է «դատական իշխանությունը հեղինակագրվող գործողություն» կամ այնպիսի արարք, որն «անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ»: Վենետիկի հանձնաժողովն այստեղ նկատում է որոշակի զուգահեռ. 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «դատական համակարգի բարձր հեղինակությունը խաթարելը» բնութագրվում է որպես կարգապահական պատասխանատվության հիմք, բայց ոչ պարտադիր՝ որպես «էական կարգապահական խախտում»:

Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ 60-րդ հոդվածի 1-ին մասի և 155-րդ հոդվածի 6-րդ մասերի միջև փոխհարաբերությունները պետք է հստակեցվեն: Թվում է, որ նույն տեսակի խախտումը կարող է հանգեցնել առավել խիստ կարգապահական տույժի (ինչպիսին, օրինակ, նախագուշացումն է) կամ որակվել որպես «էական խախտում»՝ անկախ նախորդ խախտումների արձանագրումից և դրանով



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Իսկ ուղղակիորեն հանգեցնում է դատավորի կարգավիճակի դադարեցմանը: Սկզբունքորեն այդպիսի մոդելն ընդունելի է, բայց կարգապահական մարմինները պետք է տեղյակ լինեն, որ ոչ բոլոր «գործողությունները, որոնք հեղինակագրվում են դատական իշխանությանը», կամ այնպիսի գործողությունը, որն «անհամատեղելի է դատավորի պաշտոնի հետ», անպայման ենթադրում են կոպիտ խախտում. համաչափության սկզբունքը միշտ պետք է կիրառվի (օրենսգրքի նախագծի 138-րդ հոդվածի 2-րդ մաս): Սա պետք է հստակ նշված լինի օրենսգրքի նախագծում⁴:

Մարդու իրավունքների խախտման հիմքով դատավորների կարգապահական հարցի առնչությամբ Վենետիկի հանձնաժողովն արտահայտել է այն մտեցումը, որ դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի այն վերապահումը, որ արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Նման պայմաններում, հստակ պետք է տարանջատել դատավորի կողմից օրենքին տրված մեկնաբանությունը և կարգապահական խախտման հիմք հանդիսացող նյութական կամ դատավարական իրավունք՝ դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ թույլ տրված խախտումը, ինչը պրակտիկայում խնդրահարույց է:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ ըստ Նախագծի՝ էական կարգապահական խախտում են հանդիսանում միայն մարդու իրավունքների և/կամ ազատությունների **հիմնարար** խախտումը, որը գնահատողական եզրույթ է և Բարձրագույն դատական խորհրդին տալու է գնահատման լայն հայեցողություն խախտումը հիմնարար կամ ոչ հիմնարար դիտարկելու և հետևաբար, պատասխանատվության միջոց կիրառելու համար:

Անդրադառնալով մի քանի կարգապահական խախտումների կրկնությունը որպես էական կարգապահական խախտում դիտարկելուն՝ անհրաժեշտ է փաստել, որ էական խախտում եզրույթն ըստ էության ենթադրում է խախտման որակական, այլ ոչ քանակական հատկանիշը: Այդուամենայնիվ, նման կարգավորում է սահմանելու դեպքում անհրաժեշտ է սահմանել հստակ ժամանակահատված, որի սահմաններում նման խախտումները կարող են հանգեցնել էական խախտման համար պատասխանատվության: Հակառակ դեպքում թեթև կարգապահական խախտումներ թույլ տված դատավորները, հատկապես կարիերայի սկզբնական շրջանում, կգտնվեն պաշտոնավարումը դադարեցնելու մշտական վախի ներքո՝ էականորեն վտանգելով նրանց անկախությունը⁵:

Նախագծի 49-րդ հոդվածը սահմանում է օրենքի լրացում նոր՝ 156.1 հոդվածով, որը նախատեսում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշումը բողոքարկելը՝ սահմանելով, որ բողոքը քննում է Բարձրագույն դատական խորհուրդը, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա: Բողոքարկման արդյունքում կայացված որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

⁴ Venice Commission, Opinion on Draft Judicial Code of Armenia, CDL-AD(2017) 019, para. 157.

⁵ Venice Commission, Opinion on Draft Judicial Code of Armenia, CDL-AD(2017) 019, para. 158.



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող օրենսդրական կարգավորումը, ըստ էության, չի հանդիսանում Բարձրագույն դատական խորհրդի որոշման բողոքարկում, այլ նույն մարմնի կողմից գործի վերանայում միայն նոր երևան եկած հանգամանքների բերումով: Վենետիկի հանձնաժողովը Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի փոփոխությունների և լրացումների վերաբերյալ կարծիքով արձանագրել է, որ բողոքարկման արդյունքում որոշման իրավաչափությունն ու բովանդակությունը պետք է քննության առնվի այլ մարմնի կողմից նույն փաստերի և ապացույցների հիման վրա: Հետևաբար ներկայացված մեխանիզմը չի կարող փոխարինել որոշման բողոքարկման իրավունքը բառի պատշաճ իմաստով:⁶

Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել բողոքարկման հնարավորություն Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված կարգապահական որոշումների համար: Վենետիկի հանձնաժողովը կարևորում է, որպեսզի բողոքարկման մարմինը սահմանված լինի օրենքով: Որոշումները պետք է այնպիսի մարմնի կողմից վերանայվեն, որն *անկախ է և ապահովում է դատական գործընթացների/արդար դատաքննության բոլոր երաշխիքները*⁷:

Չնայած Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից ներկայացվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման արգելքը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ և հարցը կարող է լուծվել սահմանադրական բարեփոխումների համատեքստում, առաջարկված տարբերակը չի կարող դիտարկվել որպես պատշաճ միջանկյալ լուծում՝ դարձնելով բողոքարկումն անարդյունավետ և խախտելով դատավորների՝ դատարանի մատչելիության իրավունքը:

Առաջարկ.

- Ապահովել կարգապահական պատասխանատվության հիմքերի հստակությունը՝ ի բացառումն իրավասու մարմինների կողմից դրանց կամայական մեկնաբանության հնարավորության,
- Սահմանել ողջամիտ ժամանակահատված, որի շրջանակներում ստացած կարգապահական տույժը կարող է գնահատվել էական կարգապահական խախտման շրջանակներում,
- Նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման արդյունավետ մեխանիզմ

Դատավորների գործունեության գնահատումը

Ներկայացված նախագծով դատավորների գործունեության գնահատման չափանիշներ են սահմանված դատավորի *աշխատանքի որակն ու արհեստավարժությունը, դատավորի աշխատանքի արդյունավետությունը, դատավորի կողմից վարքագծի և էթիկայի պահպանումը*: Ընդ որում, նախատեսվում են նաև տվյալ հանգամանքները գնահատելու չափանիշները, այդ թվում՝ *դատական ակտը հիմնավորելու կարողությունը, աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարելու ունակությունն ու աշխատանքային պլանավորումը, ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտ կայացնելը և այլն*:

⁶ Venice Commission and Directorate of Human Rights and Rule of Law, Joint opinion on the amendments of Judicial Code and Some Other Laws of Armenia, para. 32.

⁷ Venice Commission Opinion on the laws on the Disciplinary Liability and evaluation of Judges of the Former Yugoslav Republic of Macedonia, No 825/2015



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կարծիքը՝ դատավորների գործունեության գնահատումը պետք է լինի հիմնականում որակական և հիմնվի նրանց հմտությունների, ներառյալ՝ մասնագիտական կարողությունների (իրավունքի իմացություն, դատավարություն անցկացնելու կարողություն, պատճառաբանված ակտերի կայացում), անձնական կարողությունների (աշխատանքի ծանրաբեռնվածությունը հաղթահարելու ունակություն, որոշում կայացնելու, նոր տեխնոլոգիաների հանդեպ բաց լինելու), սոցիալական հմտությունների (բանակցելու կարողություն, հարգանք կողմերի հանդեպ) և առաջնորդելու հմտությունների վրա՝ պաշտոնի հնարավոր առաջնադասման համար⁸: Անհրաժեշտ է բացառել դատավորի գործունեության գնահատումը միայն քանակական հատկանիշների հիման վրա: Վենետիկի հանձնաժողովն արձանագրել է, որ դատավորի գործունեության գնահատման կարգավորումները պետք է հստակ սահմանեն, որ դատավորի՝ արդարադատությունը կառավարելու, կարգավորելու կարողությունների գնահատումը, օրինակ՝ առավելագույն ժամկետները պահելը, ժամանակացույցին հետևելը, և այլ պայմաններ, պետք է հաշվի առնվեն ծանրաբեռնվածության և համանման այլ հանգամանքների հետ միասին⁹: Կարևոր է, որ գնահատումը լինի մեծապես որակական և կենտրոնանա դատավորի մասնագիտական կարողությունների, անձնական և սոցիալական կարողությունների վրա: Դատավորի գնահատումը չպետք է հիմնված լինի դատավորի կայացրած վճիռների կամ որոշումների բովանդակության վրա: Ավելին, որպես գնահատման չափանիշ պետք է խուսափել այնպիսի քանակական ցուցանիշների կիրառումից, ինչպիսիք են հայցերի վերադարձնելը և արդարացումները¹⁰:

Հետևաբար, Օրենսգրքով անհրաժեշտ է սահմանել գնահատման շրջանակներում երաշխիքներ՝

- Գնահատումը չի կարող միջամտել դատավորների անկախությանը և խոչընդոտել պաշտոնավարման իրավունքը: Դատավորի գործունեության գնահատումը չպետք է վերածվի որոշումների բովանդակային վերանայման:
- Գնահատվողը պետք է իրավունք ունենա, մասնակցել իր գնահատմանը (լսված լինելու իրավունք) և ունենա բողոքարկման հնարավորություն:
- Գնահատման չափանիշները պետք է հրապարակային լինեն բոլոր դատավորների համար և գնահատումը պետք է հիմնված լինի վստահելի և օբյեկտիվ տեղեկության վրա¹¹:

Չնայած Նախագծով սահմանված են դատարանի գործունեության գնահատման նպատակները, այդուամենայնիվ որպես դատավորի գործունեության գնահատման հետևանք սահմանվում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով դիմելը՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար:

Գտնում ենք, որ նման մոտեցումը հակասում է դատավորի գործունեության գնահատման նպատակներին և դատավորների անկախության սկզբունքին: Մասնավորապես, Վենետիկի

⁸ CCJE, OPINION N° 17 on the evaluation of judges' work, the quality of justice and respect for judicial independence, (2014)

⁹ Venice Commission, [Opinion on the Judicial System Act of Bulgaria](#), CDL-AD(2017)018,

¹⁰ Venice Commission and Directorate of Human Rights and Rule of Law, [Joint opinion on the draft law amending and supplementing the judicial code \(evaluation system for judges\) of Armenia](#), CDL-AD(2014)007

¹¹ OECD, [“Independence and integrity of the judiciary”, judicial councils, other self-governance institutions and their role to ensure integrity and independence of judges, proceedings of the regional seminar](#) <http://www.oecd.org/corruption/acn/IstanbulJune2012ExpertSeminarProceedingsEN.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

հանձնաժողովը սահմանել է, որ դատավորի հերթական գնահատման նպատակն է պարզել դատավորի անհատական կարիքները՝ ապահովելու նրա որակավորման զարգացումն ու խթանումը¹²: Պարբերական գնահատումները դատավորի գործունեության կարևոր գործիքներ են, որպեսզի վերջինս բարելավի իր աշխատանքը և կարող են նաև ծառայել որպես առաջխաղացման հիմք:

Կիևի հանձնարարականի համաձայն՝ դատավորների գնահատումը կարող է օգտագործվել՝ ապահովումն դատավորի աշխատանքային գործունեության տարբեր ասպեկտների բարելավման, ինչպես նաև հնարավոր առաջխաղացման համար: Դատավորների պարբերական գնահատումները, որոնք կարող են հանգեցնել աշխատանքից հեռացման կամ այլ սանկցիաների, չեն համապատասխանում դատավորների ցմահ պաշտոնավարմանը¹³:

Միաժամանակ, Նախագիծը չի սահմանում դատավորի գործունեության գնահատման հանձնաժողովի արդյունքները բողոքարկելու հնարավորություն:

Առաջարկներ.

- Բացառել դատավորի գործունեության գնահատման արդյունքների հիման վրա դատավորի նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման հնարավորությունը,
- Նախատեսել դատավորի գործունեության գնահատման արդյունքների դատական կարգով բողոքարկման հնարավորություն

Դատավորների թեկնածուների տարիքային ցենզի և փորձառության ժամկետի իջեցում

Օրենքի 97-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորի թեկնածուն հավակնորդների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգմանը կարող են մասնակցել 28-ից 60 տարեկան, ընտրական իրավունք ունեցող անձինք, եթե... ունեն առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն: Նախագծի Հոդված 22-ը առաջարկվում է տարիքային ցենզը իջեցնել 25, իսկ 5 տարվա աշխատանքի փորձառության պահանջը դարձնել երեք:

Նախագծով տարիքային ցենզի նվազեցման վերաբերյալ ներկայացված հիմնավորումները բավարար չեն: Այս հարցի առնչությամբ միջազգային չափանիշներով արդեն իսկ ձևավորվել են որոշակի ընդհանուր մոտեցումներ, ինչպես նվազագույն, այնպես էլ պաշտոնավարման առավելագույն տարիքի առումով: Վենետիկի հանձնաժողովը հարցի առնչությամբ ունի հստակ մոտեցում՝ դատավորների տարիքային սահմանափակումները դատական իշխանության անկախության ու արդյունավետության երաշխիքներից մեկն է: Չնայած նվազագույն տարիքային շեմի առումով մեկ միասնական մոտեցում չկա, սակայն նվազագույն տարիքի ընտրությունը պարտադիր կապվում է կարողությունների ու փորձառության հետ:

Վրաստանում, Ուկրաինայում տարիքային նվազագույն շեմը 30-ն է: Վրաստանի վերաբերյալ տրված կարծիքում, Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Վրաստանի բարձրագույն դատարանի

¹² [Venice Commission and the Directorate General of Human Rights and the Rule of Law, on the Law on the Judiciary and the Status of Judges and amendments to the Law on the High Council of Justice of Ukraine, CDL-AD\(2015\)007-e](#)

¹³ [OSCE/ Kyiv Recommendations on Judicial Independence in Eastern Europe](#)



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատավորների տարիքին և փորձին, կարևորել է տարիքային ավելի բարձր շեմն ու ավելի երկար փորձառությունը¹⁴: Տրամաբանորեն, նույն մոտեցումը կիրառվում է բոլոր ատյանների թեկնածուների համար:

Առանձին երկրներում, օրինակ Մալթա, ավելի բարձր շեմ է նախատեսված, դատական մագիստրատներից պահանջվում է 7 տարվա փորձառություն, իսկ դատավորներից՝ 12¹⁵:

Նախագծով նման փոփոխություններ նախատեսելիս պետք է հաշվի առնել դատավորի պատասխանատու գործի համար պահանջվող փորձառությունն ու որոշումներ կայացնելու տեսական գիտելիքներից զատ նաև հմտություններն ու պատասխանատվություն ստանձնելու կարողությունը, ինչը անխուսափելիորեն կապվում է նաև կյանքի ու աշխատանքային փորձառության հետ:

Առաջարկ.

- Դատավորների թեկնածուների հավակնորդների համար նախատեսել առավել բարձր պահանջներ՝ և տարիքային, և մասնագիտական փորձառության:

¹⁴ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI\(2019\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-PI(2019)002-e)

¹⁵ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2018\)028-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2018)028-e)